Հավելված 4

Ընտրված առարկայի կամ մոդուլի մեկ ուսումնական պարապմունքի /երկու ակադեմիական ժամ/ անցկացման տեսլականը

1. **Մոդուլի /առարկայի/ անվանումը**

_____

2. **Ուսումնական պարապմունքի անցկացմամբ ապահովվող ուսումնառության արդյունքը**

_____
_____
_____
_____
_____
_____

3. **Էմոցիոնալ, ճանաչողական, տեխնիկական և այլ հմտություններ, որոնք ձեռք կբերեն սովորողները**

_____
_____
_____
_____

4. **Սովորողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների ստուգման մեթոդները** /տնային աշխատանքներ, բանավոր ներկայացում, անհատական կամ խմբային աշխատանքներ, ակտիվություն, թեմատիկ ուսումնասիրություններ, քուիզ (quiz) և այլն/

_____
_____
_____
_____
_____

5. **Ուսուցման մեթոդների նկարագրությունը**

_____
_____

_____

_____

_____

6. Հրավիրված խոսնակներ՝

Խնդրում ենք նշել՝ արդյոք նախատեսում եք հրավիրել խոսնակների (օրինակ՝ ոստիկանության ծառայող, դատավոր, լրագրող և այլն)

_____

_____

7. Ուսումնական պարապմունքի բովանդակության համառոտ նկարագրություն

Օրինակ՝ /«ՀՀ Սահմանադրական իրավունքի հիմունքներ, մարդու իրավունքները և ոստիկանությունը»*/ մոդուլի համար:*

Մարդու արժանապատվությունը հարգելու սկզբունքը՝ որպես հիմնարար իրավունքների պաշտպանության մասին յուրաքանչյուր ազգային կամ միջազգային փաստաթղթի ձևավորման/մշակման հիմք: Մարդու արժանապատվությունն անձեռնմխելի է. բացառություններ և սահմանափակումներ լինել չեն կարող: Այս համատեքստում առկա են որոշակի բարոյական պարտավորություններ: Այն է՝ մարդկանց հանդեպ վերաբերմունքը, կյանքի, ազատության և մարդկանց անվտանգության երաշխավորումը: Խաղաղություն ու կայունություն պահպանելու և քաղաքացիների վստահությունն ու աջակցությունն ստանալու համար ոստիկանությունը պետք է հարգի, պաշտպանի և խթանի մարդու իրավունքները:

Ոստիկանների գործողությունները պետք է բխեն օրենքից, լինեն տեղին և համաչափ՝ լավագույնս պաշտպանելու քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները: Դեմոկրատական հասարակությունում քաղաքացիները պետք է վայելեն ոստիկանության հարգանքը և լինեն պաշտպանված: Եթե քաղաքացին հանցագործություն է կատարել, ոստիկանները պետք է վերաբերվեն նրան որպես կասկածյալի, այլ ոչ թե որպես հանցագործի: Քանի որ մարդու իրավունքների պաշտպանությունը ոստիկանության գործառույթն է, այդ իրավունքները հարգելու պարտավորությունը նախանշում է ոստիկանության կողմից ձեռնարկվող մեթոդները:

8. Ուսումնական պարապմունքի ընթացքի համառոտ նկարագրությունը

Օրինակ՝ դասավանդողի և ուսանողների ներկայացում, դասի համար «կանոնների» սահմանում, ուսանողների կազմի և ակնկալիքների ընկալում, գնահատման սկզբունքների որոշում
«Մարդու իրավունքներ». կանոնների, արժեքների համախումբ, երազա՞նք, ռազմավարությու՞ն:
Այս համատեքստում ոստիկանության դերի ու նշանակության սահմանում:
Անդրադարձ անմեղության կանխավարկածին:

9. **Հատուկ ուշադրության արժանի կետեր.**

Օրինակ՝ Ինչպես է աշխատում ժողովրդավարական հասարակությունը, մարդու իրավունքների գաղափարը և արժեքը, մարդու իրավունքների կատեգորիաների և տեսակների հակիրճ նկարագրություն, ազատություն, մտքի, խղճի, կրոնի և խաղաղ հավաքների ազատություն, արդար դատաքննության, աշխատանքի, կրթության իրավունք, անմեղության կանխավարկած, ձերբակալված անձանց, փոքրամասնությունների, կանանց և երեխաների իրավունքներ, մարգինալների պաշտպանություն, գաղտնիության իրավունք:

10. **Դասապրոցեսի կազմակերպան նկարագրություն՝**

Օրինակ՝ համախմբող վարժություններ, դասախոսություն, պրեզենտացիաներ, տեսանյութ «Միսիսիպին կրակի մեջ» ֆիլմից, խաղ հարց/պատասխան ձևաչափով, խմբային քննարկում:

11. **Աղբյուրներ՝**

Օրինակ՝

- ՀՀ Սահմանադրություն
- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր
- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր
- Եվրոպայի խորհուրդ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիա